



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
hbn' (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 99-Ա

### ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝  
Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Մասիս քաղաքային համայնքի ավագանու  
2019 թվականի նոյեմբերի 15-ի նիստի օրակարգը

1. ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
- 2.ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
- 3.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
- 4.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
- 5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
- 6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴԴԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՊԵՏՐՈՍ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶՔԱՂԵՅՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ԲԱԲԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԻ ԶՔԱՂԵՅՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՍՈՒՍԱՆՆԱ ԱՎԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶՔԱՂԵՅՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ.,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի N-70 Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ.,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի N71- Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ.,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 01-Ի N-72 Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ.,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 01-Ի N-73 Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16., ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 01-Ի N-74 Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17., ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏԵՄԲԵՐԻ 01-Ի N-75 Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՔՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
 ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
 հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 100-Ն

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, „Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի „բ,, կետի, 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը և ֆինանսական բաժնի պետի զեկույցը (զեկույցը կցվում է) **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. համայնքի 2019թ. բյուջեի վարչական մասի ծախսերը վերաբաշխել համաձայն հավելված 1-ի:

2. համայնքի 2019թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը վերաբաշխել համաձայն հավելված 2-ի:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷՂՎԱՐԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՔՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

## Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2019 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

2020թ. համայնքում կապիտալ աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել նախագծա-նախահաշվային աշխատանքներ՝ Մասիս քաղաքի 1-ին թաղամաս 2-րդ փողոցի և 7-րդ թաղամաս 2-րդ փողոցի կոյուղագծերի անցկացման համար՝ 150.0 հազ. դրամի, Նոր թաղամաս թիվ 19 շենքի տանիքի հիմնանորոգման համար՝ 1200.0 հազ. դրամի և 1-3 փողոցների լուսավորության ցանցի շարունակության, 1-ին, 4, 5, 6, 7-րդ թաղամասերի, Մասիս Կայարանի Ադ. Ասատրյանի անվան փողոցի լուսավորության ցանցի կառուցման համար 2300.0 հազ. դրամի:

Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի 14 և 18 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքները կատարվել և հասցվում են ավարտին: Կատարված աշխատանքներին զուգահեռ տեսանելի է դառնում, որ որոշակի լրացուցիչ աշխատանքներ կատարելուց հետո բակը կունենա ավելի բարեկարգ և գեղեցիկ տեսք: Առաջարկվում է նշված աշխատանքները կատարելու համար բյուջեից հատկացնել միջոցներ կապալառուի հետ կնքված պայմանագրի գնի 10 տոկոսի սահմաններում՝ 1400.0 հազար դրամի չափով:

Համաձայն ձեռք բերված նախագիծ-նախահաշվի Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման համար անհրաժեշտ է 10818.0 հազար դրամ:

Քաղաքի որոշակի հատվածներում՝ առկա լուսավորման ցանցի հարակից տարածքներում լուսատուներ տեղադրելու համար անհրաժեշտ են հ ենայուներ, որոնք ձեռք բերելու համար անհրաժեշտ է 980.0 հազար դրամ, մեկ հենասայան շուկայական արժեքը 70.0 հազար դրամ է:

Նշված կապիտալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցները առաջարկվում է հատկացնել Նախադպրոցական կրթության ծրագրով նախատեսված վարչական սարքավորումների ձեռք բերման համար նախատեսված միջոցներից և ՄՊՍԿ և քաղաքային կենտրոնական գրադարան ՀՈԱԿ-ների մասնաշենքերում ջեռուցման համակարգի անցկացման համար նախատեսված միջոցներից, հաշվի առնելով, որ առաջիկա բյուջետային տարում նախատեսվում է ՄՊՍԿ ՀՈԱԿ-ի և նախկին մարզադպրոցի մասնաշենքերում իրականացնել հիմնանորոգում:

Մասիսի քաղաքապետարանի վարչական շենքի տոնական տեսքի համար անհրաժեշտ է ձեռք բերել զարդարանքներ՝ լուսային էֆեկտներով: Լուսային զարդարանքների շուկայական ընդհանուր արժեքը կազմում է 940.0 հազար դրամ:

Հաշվի առնելով սոցիալական դրամական օգնության համար դիմում խնդրանքների թիվը առաջարկվում է ընթացիկ տարվա ամար նախատեսված այլ նպաստների գումարը ավելացնել 500.0 հազար դրամով:

Աշխարհի, Եվրոպայի և հանրապետական առաջնություններում բարձր արդյունքների հասած մարզիկ-մարզուհիներին խրախուսելու նպատակով առաջարկվում է լրացուցիչ հատկացնել 300.0 հազար դրամ:

Հ. Թումանյանի 150 ամյակին նվիրված մշակութային միջոցառումների շարքից «Թմբկաբերդի առումը» ներկայացմանը համայնքի ակտիվ երիտասարդների մասնակցությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հատկացնել 180.0 հազար դրամ:

Արաջարկվում է նշված ընթացիկ ծախսերի իրականացման համար միջոցները հատկացնել համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 1220.0 հազար դրամ և ՋԼՄ ծառայությունների համար նախատեսված միջոցներից՝ 700.0 հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար

Տինանսական բաժնի պետ



*[Handwritten signature]*

Վ. Գաբրիելյան

Ն. Սահակյան

Մասիս բաղաբային համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի ծախսերի վերաբաշխումը

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառնական դասակարգում, նպատակ	հոդված	Ծախսեր Գումարի չափը /հազար դրամ/
1	11	1	2	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը նվազեցնել	4891	-1220,0
2	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային այլ ծառայությունների ՉԼՄ ծառայությունները նվազեցնել	4234	-700,0
3	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ. բաղաբապետարանի վարչական շենքի տոնական զարդարման համար լուսային էֆեկտների ձեռք բերում	4269	940,0
4				Հ. Թումանյանի 150 ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում թատերական ներկայացմանը մասնակցություն	4239	180,0
5	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններով համայնքի լավագույն մարզիկներին խրախուսելու նպատակով սպորտային նպաստներն ավելացնել	4727	300,0
6	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ. Այլ նպաստները ավելացնել	4729	500,0
				<b>Ընդամենը</b>		<b>0,0</b>

Աշխատակազմի բարձրագույն

ֆինանսական բաժնի պետ



*(Handwritten signatures in blue ink)*

Վ. Գաբրիելյան

Ն.Սահակյան



Մասիս բաղաբային համայնքի 2019 թվականի բյուջեի ֆոնդային մասի ծախսերի վերաբաշխումը

h/h	բաժին	փուլ	դաս	Պորձառական դասակարգում, նպատակ	հոդված	Փումարի չափը /հազար դրամ/
1	09	8	1	Կրթություն այլ դասերին չպատկանող, ՄՊՍԿ և ԶԿԳ ՀՈԱԿ-ների մասնաշենքերի ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքները նվազեցնել	5113	-10134,7
2	09	1	1	Նախադպրոցական կրթություն. Վարչական սարքավորումների ձեռք բերման հոդվածը նվազեցնել	5122	-6713,8
3				Նախադպրոցական կրթություն. Թիվ 5 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ	5113	10818,5
4	06	1	1	Բնակարանային շինարարություն. 3-րդ թաղ. 14 և 18 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքները ավելացնել	5113	1400,0
5				Բնակարանային շինարարություն. Նոր թաղամաս թիվ 19 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	1200,0
6	06	3	1	Զրամատակարարում. Նոր հողերի 1-ին թաղ. 2-րդ փողոցի և 7-րդ թաղ. 2-րդ փողոցի կոյուղագծի անցկացման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	150,0
7	06	4	1	Փողոցների լուսավորում. Մասիս բաղաբային 1-3 փողոցների շարունակության, Մասիս Կայարանի Աղաս Ասատրյանի անվան փողոցի և Նոր հողերի թաղամասերում փողոցների լուսավորման ցանցի կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	2300,0
8				Փողոցների լուսավորում. Համայնքի որոշակի հատվածների լուսավորման համար լուսատուների հենասյուների ձեռք բերում	5122	980,0
<b>Ընդամենը</b>						<b>0,0</b>

Աշխատակազմի քարտուղար

Ֆինանսական բաժնի պետ



*[Signature]* Վ. Գաբրիելյան

*[Signature]* Ն.Սահակյան



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 101-Ա

### ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

„Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին մասի 42-րդ կետի համաձայն, համայնքի պատմության, հիշարժան իրադարձությունները հիշատակելու, համայնքի տարածքում մշակութային և մասսայական միջոցառումները համակարգելու և կանոնակարգելու նպատակով **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. Մասիս քաղաքի օր սահմանել սեպտեմբերի 7-ը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԿԵՐԴՅԱՆ ԱՐՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԱՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ Ա Ր Ն Շ ՈՒ Մ

15 ԸՆԴՈՒՄԻ ԿՈՄՄՍՆԱԿԻ Կ 107-Ա

ՄԱՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՈՄՍՆԱԿԻ Կ 107-Բ

Մասնակցությունը կատարվում է համայնքի կողմից...

ՄԱՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԿՈՄՍՆԱԿԻ Կ 107-Բ  
Կ 107-Բ  
Կ 107-Բ  
Կ 107-Բ  
Կ 107-Բ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
հեռ' (0236) 43040,40440, էլ. փոստ' masis.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 102-Ա

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, ավագանու կանոնակարգի 22-րդ և 23-րդ կետերի համաձայն **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1.Ստեղծել ավագանու մշտական գործող հետևյալ հանձնաժողովները և հաստատել անհատական կազմը.

ա/Գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողով.

Վահան Վարդանյան

Վաչագան Արզարյան

Գարիկ Սավադյան

բ/Սոցիալական առողջապահության, սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հարցերի մշտական հանձնաժողով.

Արրահամ Շահվերդյան

Սարգիս Ռաֆայելյան

Էդվարդ Մարգարյան

գ/ Քաղաքաշինության, տրանսպորտի, կոմունալ տնտեսության, բնության և շրջակա միջավայրի պահպանության մշտական հանձնաժողով.

Էդմոնդ Ստեփանյան

Գարիկ Սավադյան

Սամվել Հովհաննիսյան

դ/Ֆինանսավարկային բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.

Արսեն Եղիազարյան

Սամվել Հովհաննիսյան

Արմեն Մարտիրոսյան

ե/ Ենթակառուցվածքների գործունեության հարցերով մշտական հանձնաժողով.

Պապիկ Աբգարյան

Սամվել Հովհաննիսյան

Արսեն Եղիազարյան

Սարգիս Ռաֆայելյան

զ/ Համայնքի տնտեսական զարգացման և փոքր ու միջին բիզնեսի աջակցման մշտական հանձնաժողով.

Սարգիս Ռաֆայելյան

Էդմոնդ Ստեփանյան

Գեղամ Փահլևանյան

Արման Ղազարյան:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԳԱՐՅԱՆ ՎԱՋԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ


ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՔՐԱՀԱՄ

ԹԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԿԱՆ



Համայնքի ղեկավար



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՄ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
հեռ. (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 103-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ  
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ  
ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջով և հաշվի  
առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Մասիս քաղաքային համայնքի  
ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս  
քաղաքային համայնքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման  
կանոնները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՐԱԿԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



**ԿԱՆՈՆՆԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ**

1. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան գործունեության թույլտվություն:
2. Հանրային սննդի օբյեկտը պետք է ունենա ճաշացուցակ, որտեղ նշվում է կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակը, որը հանրային սննդի օբյեկտի կողմից առաջարկվում է սպառողին՝ մասնաբաժնի և գնի նշումով:
3. Հանրային սննդի կազմակերպման սրահը պետք է հատուկ կահավորված լինի նախատեսված պատրաստի խոհարարական արտադրանքի իրացման և սպառման կազմակերպման համար:
4. Մուտքի մոտ պետք է փակցված լինի՝ ցուցանակ, որտեղ նշվում են կազմակերպության անվանումը, տիպը, կազակերպական-իրավական տեսակը, իրավաբանական հասցեն և աշխատանքային ռեժիմը:
5. Սպասարկող անձնակազմի անդամները, որոնք անմիջապես առնչվում են սննդի հետ, պետք է ունենան անձնական սանիտարական գրքույկ:
6. Խոհարարն ու հրուշակագործը պետք է ունենան մասնագիտական կրթություն կամ մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ:
7. Սպասարկող անձնակազմի անդամները պետք է ունենան աշխատանքային արտահագուստ, ինչպես նաև կազմակերպության ղեկավարի կողմից տրված անվանաքարտ՝ լուսանկարով, անվան, ազգանվան և զբաղեցրած պաշտոնի նշմամբ՝ վավերացված կազմակերպության կնիքով:
8. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով, այդ թվում օրենքով սահմանված կարգով ստուգաչափված կշեռքներով և չափման այլ համապատասխան թույլատրելի միջոցներով, ինչպես նաև տվյալ հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:
9. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:
10. Ուսումնական հաստատություններում մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ակոհոլային խմիչքների իրացումը:
11. Ժամը 24<sup>00</sup>-ից հետո աշխատող զվարճանքի օբյեկտներում արգելվում է ակնհայտ 16 տարին չլրացած անձանց մուտքը:
12. Ժամը 24<sup>00</sup>-ից հետո աշխատող բոլոր հանրային սննդի օբյեկտների սրահի պատերը և պատուհանները պետք է ծայնամեկուսացված լինեն, որպեսզի ներսի աղմուկը չհարուցի շրջակա տարածքում բնակվող բնակիչների դժգոհությունը, ինչպես նաև կազմակերպության

ղեկավարի կողմից պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ ժամը 23:00-7:00-ն օրյեկտի գործունեության հետ կապված նաև օրյեկտից դուրս լուրջ պահպանման ուղղությամբ:

13. Հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:

14. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:

15. Թույլտվություն տալու հետ միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:

16. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը, որը տրվում է հայտատուի կողմից վճարված տեղական տուրքին համապատասխանող ժամկետով՝ վճարման օրվանից (եթե հայտատուի կողմից այլ ժամկետ չի նշվում):

17. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտի մերժման վերաբերյալ որոշման մեջ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

**Աշխատակազմի քարտուղար**



**Վարդան Գաբրիելյան**



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 104-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ  
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ  
ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի, «Գովազդի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և հաշվի  
առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Մասիս քաղաքային համայնքի  
ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս  
քաղաքային համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն  
ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԳԱՐՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՐԱԿԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԱՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ  
ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում են Մասիս համայնքում արտաքին գովազդի տեղաբաշխման կարգն ու պայմանները, ծավալը, քանակությունը, արտաքին գովազդի տեղադրման այլ չափորոշիչները, տեղադրման թույլտվության տրամադրման կարգը, գովազդի համար սահմանված տեղական տուրքերի վճարման կարգը և պայմանները:

2. Համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղադրումն իրականացվում է «Գովազդի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

3. Համայնքի տարածքում գովազդի տեղադրման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը: Արտաքին գովազդի տեղադրման համար իրավաբանական կամ ֆիզիկական անձը /այսուհետև՝ դիմող/ համայնքապետարան է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- ա/ դիմում համայնքի ղեկավարի անունով,
- բ/ արտաքին գովազդի նախատեսվող էսքիզը, տեղադրման տարածքի հատակագիծը, որտեղ պետք է նշված լինի գովազդային վահանակի փաստացի տեղադրման վայրը,
- գ/ գովազդատու իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրանցման վկայականի պատճենը/ ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը,
- դ/ բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման հատվածներում արտաքին գովազդ տեղադրելու դեպքում՝ շենքի կառավարման լիազոր մարմնի համապատասխան որոշումը,
- ե/ ճանապարհների վրա արտաքին գովազդի տեղադրման դեպքում երթևեկության անվտանգության մասով գրավոր համաձայնություն ճանապարհային ոստիկանությունից՝ ներկայացված հատակագծի վրա համապատասխան նշումով,
- զ/ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների արտաքին գովազդի դեպքում առողջապահության նախարարության թույլտվությունը:

4. Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումը սույն կանոնների 3-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում իրականացնում է.

- ա/ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություն,
- բ/ գովազդի տեղադրման վայրի զննում,
- գ/ տեղադրվող գովազդի համապատասխանությունը գործող պահանջներին,
- դ/ եզրակացության կազմում:

5. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրման մասին դիմումի բավարարումը կամ մերժումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ,

6. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրման դեպքում դիմումատուին տրամադրվում է գովազդի էսքիզի համաձայնեցված տարբերակը՝ ստորագրված և կնքված համայնքի ղեկավարի կողմից, անհրաժեշտության դեպքում նաև տեխնիկական պայմաններ, որտեղ նշվում են արտաքին գովազդի տեղադրման աշխատանքներն իրականացնելու ժամկետները:

7. Արտաքին գովազդի տեղադրման դիմումը կարող է մերժվել, եթե՝

ա/ ներկայացված փաստաթղթերը թերի են և դրա մասին համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից պատշաճ ձևով նախազգուշացվելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում դիմողը չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը կամ նյութերը,

բ/ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում «Գովազդի մասին» ՀՀ օրենքի կամ սույն կարգի պահանջներին,

գ/ արտաքին գովազդը տեղադրվելու է ճանապարհի վթարավտանգ հատվածների, հենապատերի, ծառերի կամ ժայռերի վրա և այլ դեպքերում:

8. Արտաքին գովազդի թույլտվության տրամադրումը մերժելու մասին որոշման մեջ նշվում են մերժման պատճառներն ու մերժման համար հիմք հանդիսացող իրավական հիմքերը:

### 1. ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

9. Գովազդային վահանակի հենասյունը պետք է պատրաստվի այնպիսի նյութերից, որ քամու կամ կողմնակի ազդեցության հաշվարկային բեռնվածության տակ և շահագործման ընթացքում ապահովվի բավարար կայունություն:

10. Ճանապարհի բաժանարար գոտում գովազդային վահանակի տեղաբաշխման ժամանակ.

ա/ եթե գովազդային վահանակի լայնությունը գերազանցում է բաժանարար գոտու լայնությանը, ապա գովազդային վահանակի ներքևի եզրը պետք է գտնվի ճանապարհի մակերևույթից 6 և ավելի մետր բարձրության վրա,

բ/ եթե գովազդային վահանակի լայնությունը չի գերազանցում բաժանարար գոտու լայնությանը, ապա գովազդային վահանակի ներքևի եզրը պետք է գտնվի ճանապարհի մակերևույթից 2.5 և ավելի մետր բարձրության վրա:

11. Գովազդի լուսավորությունը՝

ա/ լուսավորության համար թույլատրվում է օգտագործել հակահրդեհային անվտանգության պահանջները բավարարող էլեկտրական լուսավորման սարքեր,

բ/ լուսավորման սարքերի ամրացումը պետք է ապահովի դրանց հուսալի միացումը գովազդային կառուցվածքի հետ այնպես, որ դիմանան ձյան և քամու ազդեցության հնարավոր բեռնվածություններին, տատանվող և հարվածային ազդեցություններին,

գ/ երթևեկության մասնակիցներին չկուրացնի լույսով, այդ թվում և անդրադարձով,

դ/ շարժվող տարրեր պարունակող գովազդային պատկերների օգտագործումը գովազդային վահանակի վրա պետք է իրականացվի այնպես, որ գովազդային տեղեկությունը միաժամանակ ամբողջությամբ հայտնվի գովազդային վահանակի վրա,

ե/ լուսավորությունը պետք է իրականացվի փողոցային արտաքին լուսավորության հետ միասին:

12. Ճանապարհին տեղադրված գովազդը պետք է ապահովի՝

ա/ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների տեսանելիությունը և երթևեկության մասնակիցների կողմից դրանց ընկալումը,

բ/ ինժեներական կառույցների ճակատային մասի վրա տեղադրելու դեպքում չփոքրացնի կառույցի տեսանելի չափերը,

գ/ հետիոտների կողմից այն ընկալելն առանց ճանապարհի երթևեկելի մաս դուրս գալու:

13. Գովազդակիր կազմակերպությունը պարտավոր է ապահովել գովազդային վահանակի պատշաճ վիճակը /ժամանակին ներկել, փոխել պատռված պաստառները և այրված լամպերը/:

14. Գովազդակիր կազմակերպությունն իր ցանկությամբ իրավունք ունի փոխելու գովազդային վահանակի պաստառը, դրա մասին 7 օր առաջ տեղյակ պահելով համայնքի ղեկավարին:

### 3. ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՎԱՐՏԻ ՓԱՍՏԱԳՐՈՒՄԸ

15. Դիմողը տեխնիկական պայմանների հիման վրա կատարում է գովազդի տեղադրման աշխատանքները՝ ներկայացված նախագծերին համապատասխան և տեղեկացնում համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանմանն աշխատանքների ավարտի մասին, որից հետո ստորաբաժանման աշխատակիցն իրականացնում է կատարված աշխատանքների ուսումնասիրություն:

16. Կատարված աշխատանքները սույն կարգի պահանջներին և ներկայացված նախագծերին համապատասխանության դեպքում /եթե կատարվել են նաև գովազդային վահանակի շինարարական աշխատանքներ/, համայնքապետարանի կողմից կազմվում է շինարարական աշխատանքների ավարտման ակտ:

#### 4. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

17. Արտաքին գովազդի տեղադրման աշխատանքների ավարտի փաստագրումից հետո հաջորդող օրվանից սկսած իրականացվում են սահմանված տեղական տուրքերի հաշվառումը և գանձումը:

18. Դատարկ գովազդային վահանակը հետագայում գովազդով համալրելու դեպքում գովազդատուն պարտավոր է այդ մասին նախօրոք տեղեկացնել համայնքապետարան, որից հետո կատարվում է տեղական տուրքի վերահաշվարկ՝ ավագանու կողմից ընդունված տեղական տուրքերի չափերին համապատասխան:

#### 5. ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼԸ

19. Արտաքին գովազդի տեղադրման թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում հետևյալ դեպքերում, երբ՝

ա/ գովազդատուն խախտել է «Գովազդի մասին» ՀՀ օրենքը, գովազդի վերաբերյալ այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջները,

բ/ խախտվել են թույլտվության և տեխնիկական պայմաններով սահմանված ժամկետները կամ պահանջները,

գ/ գովազդատուն ներկայացրել է գրավոր դիմում:

20. Արտաքին գովազդի տեղադրման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու դեպքում գովազդատուն սեփական միջոցների հաշվին պարտավոր է գովազդի տեղադրման համար հատկացված հատվածը/տարածքը/ բերել նախկին տեսքի:

Աշխատակազմի քարտուղար



Վարդան Գաբրիելյան



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 105-Ա

ՊԵՏՐՈՍ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ  
ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Պետրոս Կիրակոսյանի լիազորված անձ Արտյոմ Մուրադյանի խնդրանքին /մտից մատյանի՝28.08.2019թ. թիվ 957/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, 5-րդ փողոց, թիվ 33/21 հասցեում Պետրոս Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած վարձակալած 0,004 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածքը /ծածկագիր՝03-003-0087-0069/, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Պետրոս Կիրակոսյանին:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 117600 /հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ ՀՀ դրամ:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ



ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄԿԵԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՐՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
hbn' (0236) 43040,40440, էլ. փոստ' masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 106-Ա

### ԲԱՔԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Բաքիկ Խաչատրյանի խնդրանքին /մտից մատյանի՝ 28.08.2019թ. թիվ 956/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, Գ.Նժդեհի փողոց, թիվ 36/39 հասցեում Բաքիկ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող խանութի զբաղեցրած վարձակալած 0,0066 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածքը /ծածկագիր՝ 03-003-0138-0092/, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Բաքիկ Խաչատրյանին:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 194040 /հարյուր իննսունչորս հազար քառասուն / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ ՀՀ դրամ:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ   
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ   
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՐՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
 ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
 հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 107-Ա

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՎԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
 ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ  
 ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Սուսաննա Ավետյանի խնդրանքին /մտից մատյանի՝05.11.2019թ. թիվ 1295/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, նոր թաղամաս, թիվ 25/8 հասցեում Սուսաննա Ավետյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած վարձակալած 0,0032 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածքը /ծածկագիր 03-003-135-024/, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Սուսաննա Ավետյանին:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 94080 /իննսունչորս հազար ութանասուն / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ ՀՀ դրամ:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԳԱՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,  
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 108-Ա

#### ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

